Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-01/27 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

10.11.2026թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Վարդան Գասպարյան
Անդամներ՝ Հասմիկ Միրզոյան
Մարիաննա Գևորգյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Վարդան Գասպարյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է **«Նատալի ֆարմ» ՍՊԸ**, **«Իվաֆարմ» ՍՊԸ** և **«ԱԷՄՋԻ» ՍՊԸ** մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնելու մասին

Վարդան Գասպարյան

Մասնակիցների ներկայացրած շտկումները ուսումնասիրելու համար նիստը կասեցնել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի պահանջները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

13.11.2026թ. ժամը 11^{00} նիստը վերսկսվում է.

3. Շտկված հայտերի հրավերով սահմանված պահանջների համապատասխանության մասին

Վարդան Գասպարյան

«Իվաֆարմ» ՍՊԸ մասնակցի շտկումները համապատասխանում են հրավերի պահանջներին, հայտի ոչ գնային պայմանները գնահատվում են բավարար:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է շտկումներ, մասնակցի հայտը 13-րդ չափաբաժնի մասով գնահատվում է բավարար, իսկ **59-րդ** չափաբաժնի մասով հայտը գնահատվում է անբավարար, այս չափաբաժնով առաջարկվող դեղը գրանցված չի ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

«ԱԷՄՋԻ» ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է շտկումներ, մասնակցի հայտը **4 և 43** չափաբաժնի մասով գնահատվում է բավարար, իսկ **11, 17 և 67** չափաբաժինների մասով հայտը գնահատվում է անբավարար, այս չափաբաժիններով առաջարկվող դեղերի մի մասը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի ամփոփման մասին

Վարդան Գասպարյան

4.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 6, 13, 14, 16, 18, 20, 24, 30, 31, 37, 40, 41, 45, 46, 51, 54, 55, 62, 66, 70, 71, 73, 80, 81, 82 - «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն, ընդ որում **45, 70 և 80** չափաբաժիններով պայմանագիր կկնքվի, եթե պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ կներկայացվի ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2.2 ենթակետով պահանջվող փաստաթղթերը:
- չափաբաժին 3,7 - «Վագա ֆարմ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 53 - «Լիկվոր» ՓԲԸ-ն,
- չափաբաժին 32,38 - «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ -ն
- չափաբաժին 35 - «Տոնուս-Լես» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 49, 64, 65, 76 - «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 50- «Արֆարմացիա» ՓԲԸ-ն,
- չափաբաժին 12, 23, 29, 39, 60 - «Արփիմեդ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 4, 43 - «ԱԷՄՋԻ» ՍՊԸ -ն, ընդ որում **43-րդ** չափաբաժնի մասով պայմանագիր կկնքվի, եթե պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ կներկայացվի ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2.2 ենթակետով պահանջվող փաստաթղթերը:
- չափաբաժին 21, 25, 63, 69 - «Իվաֆարմ» ՍՊԸ -ն, ընդ որում **69-րդ** չափաբաժնի մասով պայմանագիր կկնքվի, եթե պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ կներկայացվի ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2.2 ենթակետով պահանջվող փաստաթղթերը:
- չափաբաժին 5, 19, 44, 57 - «Թի Էմ Քորփորեյշն» ՍՊԸ -ն:

4.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1, 2, 8, 9, 10, 15, 22, 26, 34, 42, 56, 68, 72, 78, 79, 83 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների գնառաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված գները:

4.3 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 27, 28, 33, 36, 47, 48, 58, 61, 74, 75, 77 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

4.4 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 52 չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հավասար նվազագույն գնային առաջարկներ:

4.5 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 11, 17, 59, 67 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

4.6 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Գասպարյան**

Անդամներ **Հասմիկ Միրզոյան**

Մարիաննա Գևորգյան

Քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**